ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

02 փետրվարի 2024 թ.

N 59-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՋԻՎԱՆ ՖԻԴՈՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ, 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-ին կետի, 226-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 14-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ներքին աուդիտի կոմիտեի քարտուղար Հակոբ Ղուլոյանի 2024 թվականի հունվարի 16-ի Ն/119-2024 գրությունը և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Վահան Զարոյանի 2024 թվականի հունվարի 18-ի թիվ 02//0459-2024 գրությանն ի պատասխան Ջիվան Ֆիդոյանի 2024 թվականի հունվարի 24-ի Մ-1542-2024 գրությունը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վերին Գետաշենի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ջիվան Ֆիդոյանի նկատմամբ՝ աշխատանքային պարտականություններն ոչ պատշաճ կատարելու համար կիրառել «Խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

02.02.2024

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ

Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
ք. Գավառ